ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կատարողականի գնահատման սույն մեթոդոլոգիան կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշումը:

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ.
2. գործընթացի չափորոշիչներ.
3. արդյունքի չափորոշիչներ:

Արդյունքները համեմատվում են 2018 թ. 2-րդ եռամսյակում ունեցած արդյունքների հետ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Արդյունքները ներկայացված են Հավելված 2.1-ում:

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար վերլուծվում է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Արդյունքները ներկայացված են Հավելված 2.2-ում:

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2019 թ. 2-ին եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն ծախսվել, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 3 աշխատակից:

2018 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն ծախսվել, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 3 աշխատակից:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2019 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ծախսվել է 1 105 600 դրամ, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 16 աշխատակից:

2018 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ծախսվել է 27 600 դրամ, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 6 աշխատակից

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[1]:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել և համեմատել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի միջին տևողությունը:

2019 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2.3 օր:

2018 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2 օր:

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

2019 թ. 2-րդ եռամսյակում բարձր ռիսկային և ընդհանուր քանակի հարաբերակցությունը կազմել է 0.777: Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտների և ստուգման օբյեկտների քանակը կազմել է 56, իսկ ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 72:

2018 թ. 2-րդ եռամսյակում չափորոշիչի գնահատումը չի իրականացվել:

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվելու համար օգտվում ենք ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերակցությունից:

2019 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2.9 օր:

2018 թ. 2-րդ եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2.8 օր:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ

[1] Այս կետի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորս եռամսյակը:

իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

2019 թ. 2-րդ եռամսյակում ըստ անհրաժեշտության ստուգումներ, որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ, չեն իրականացվել:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից

2019 թ. 2-րդ եռամսյակում դիմում-բողոքներ չեն ստացվել:

2018 թ. 2-րդ եռամսյակում դիմում-բողոքներ չեն ստացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը

2019 թ. 2-րդ եռամսյակում չափորոշիչի քանակական հարաբերակցությունը կազմել է 0,18 (տարեկան ծրագրով իրականացվել է 72 ստուգում, ըստ անհրաժեշտության - 13 ստուգում):

2018 թ. 2-րդ եռամսյակում չափորոշիչի քանակական հարաբերակցությունը կազմել է 0,01:

3.2) Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[2] հաշվարկվում է նշված բնագավառներում առկա իրավիճակի գնահատականը համեմատելով նախորդ տարվա իրավիճակի գնահատականի հետ:

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2019 թ. 2-րդ եռամսյակում ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 15 995 դրամ, իսկ մարդկային ռեսուրսները 2:

2018 թ. 2-րդ եռամսյակում ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 8 747 դրամ, իսկ մարդկային ռեսուրսներ 2,05:

3.4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

2019 թ. 2-րդ եռամսյակում դիմում-բողոքներ չեն ստացվել:

2018 թ. 2-րդ եռամսյակում դիմում-բողոքներ չեն ստացվել:

---

[2] Այս կետի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորրորդ եռամսյակը: